

# Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի Որակի քաղաքականությունը

(Հաստատված ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի թիվ 17- Ա որոշմամբ)

ՀՀ վիճակագրական կոմիտեն (Արմստատ) հանրային շահին ուղղված գործառնություններ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

Արմստատ-ի առաքելությունն է՝ հանրության համար պաշտոնական վիճակագրության հավաքագրումը, հրապարակումը և տարածումը:

Արմստատ-ի կառավարման բարձրագույն մարմինը Վիճակագրության Պետական Խորհուրդն է, որին իրավունք է տրված ընդունելու պաշտոնական վիճակագրության վերաբերյալ նորմատիվ և անհատական բնույթի որոշումներ, հաստատելու տարեկան և հնգամյա վիճակագրական ծրագրերը և դրանց կատարման հաշվետվությունները: Մոյն համակարգը Արմստատ-ի համար ապահովում է պրոֆեսիոնալ անկախության ամուր իրավական հիմքեր գործելու համաձայն հիմնավորված մեթոդաբանության և համապատասխան վիճակագրական ընթացակարգերի՝ պահպանելով անկողմնակալությունը, օբյեկտիվությունը և վիճակագրական տեղեկատվության գաղտնիությունը:

Սպառողների մշտապես աճող պահանջները բավարարելու նպատակով Արմստատ-ը խստորեն հետևում է յուրաժամանակության և ճշտապահության, մատչելիության և պարզության սկզբունքներին:

Արմստատ-ը պատասխանատու է Հայաստանում պաշտոնական վիճակագրության համար և պետք է ապահովի պաշտոնական վիճակագրության համաձայնեցվածությունը և համադրելիությունը, օգտագործելով բիզնեսը և վարչական աղբյուրները, երբ հնարավոր է, խուսափելու ռեսպոնդենտների ավելորդ ծանրաբեռնվածությունից:

Արմստատ-ի որակի քաղաքականությունն ուղղված է համապատասխան մեթոդաբանությունների և գործիքների մշակման միջոցով վիճակագրական արտադրանքի և գործընթացների համակարգված բարելավմանը, շեշտը դնելով բարձր որակի ծառայությունների մատուցմանը, աշխատանքի և ծախսերի արդյունավետության բարձրացմանը:

Արմստատ-ի որակի համակարգը հիմնված է Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգրքի 15 սկզբունքների վրա՝

1. Պրոֆեսիոնալ անկախություն
- 1.1 Համակարգում և համագործակցություն
2. Մանդատ տվյալների հավաքագրման համար
3. Ռեսուրսների համապատասխանություն
4. Որակի հանձնառություն
5. Վիճակագրական գաղտնիություն
6. Անկողմնակալություն և օբյեկտիվություն
7. Հիմնավորված մեթոդաբանություն
8. Համապատասխան վիճակագրական ընթացակարգեր
9. Ռեսպոնդենտների ոչ ավելորդ ծանրաբեռնվածություն
10. Ծախսերի արդյունավետություն
11. Համապատասխանություն
12. Ճշգրտություն և արժանահավատություն
13. Յուրաժամանակություն և ճշտապահություն
14. Համաձայնեցվածություն և համադրելիություն
15. Մատչելիություն և պարզություն: